

Հաստատված է նոր խմբագրությամբ
«Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ
դիտորդ խորհրդի որոշմամբ

Նոր խմբագրությամբ գրանցված է

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկում

Գլխավոր տնօրեն՝ Հայկ Եգանյան

Նախագահ՝ Մարտին Գալստյան

«05» նոյեմբերի, 2021թ.

ք. Երևան
ՀՖԲ-01/092Լ

« _ » _____ 2021թ.

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱ»
ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

**ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ
ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ**

(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)

Գլուխ 1. Հասկացություններ

- 1) Սույն կանոններում կիրառվող հասկացություններն ունեն սույն գլխով սահմանված նշանակությունները:
- 2) «**Բացման գին**». բացման աճուրդի և/կամ առևտրային նստաշրջանի ընթացքում տվյալ ֆինանսական գործիքով կնքված առաջին գործարքի գինը:
- 3) «**Փակման գին**». առևտրային նստաշրջանի ընթացքում տվյալ ֆինանսական գործիքով կնքված վերջին գործարքի գինը:
- 4) «**Առավելագույն գին**». տվյալ ֆինանսական գործիքով կնքված գործարքների ամենաբարձր գինը:
- 5) «**Նվազագույն գին**». տվյալ ֆինանսական գործիքով կնքված գործարքների ամենացածր գինը:
- 6) «**Գործարքի գին**». գործարքի առարկա ֆինանսական գործիքի մեկ միավորի գին կամ վարկի տարեկան տոկոսադրույք՝ վարկային ռեսուրսի դեպքում:
- 7) «**Գնման լավագույն գին**». տվյալ ֆինանսական գործիքի գնման հայտերում նշված ամենաբարձր գինը:
- 8) «**Վաճառքի լավագույն գին**». տվյալ ֆինանսական գործիքի վաճառքի հայտերում նշված ամենացածր գինը:
- 9) Սույն կանոններում կիրառվող այլ հասկացություններն ունեն «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով և Օպերատորի այլ կանոններով սահմանված նշանակությունները:

Գլուխ 2. Օպերատորի կողմից բացահայտվող տեղեկատվությունը

- 1) Առևտրի մասնակիցներին և հանրությանը տեղեկատվության բացահայտման գործընթացի պատշաճ կազմակերպման, տեղեկատվության թափանցիկության, հրապարակայնության և տեղեկությունից օգտվողների հավասարության սկզբունքի ապահովման համար Օպերատորը՝
 - ա) սույն կանոններին համապատասխան կազմակերպում է Օպերատորի կողմից տեղեկատվության բացահայտման գործընթացի իրականացումը,
 - բ) ապահովում է բացահայտվող տեղեկատվության հավաստիությունը,
 - գ) ապահովում է առևտրային գաղտնիք պարունակող տեղեկատվության (այդ թվում՝ գործարքների կողմերի վերաբերյալ տեղեկատվության) տարանջատումը և դրա հրապարակման (տարածման) կանխարգելումը, եթե, այլ բան սահմանված չէ ՀՀ կենտրոնական բանկի հետ համաձայնեցված՝ Օպերատորի գործադիր մարմնի ղեկավարի որոշմամբ, որն ուժի մեջ է մտնում այդ մասին շուկայի մասնակիցներին տեղեկացնելուց հետո:
- 2) Ոչ հրապարակային առաջարկի հիման վրա արժեթղթերի տեղաբաշխման վերաբերյալ տեղեկատվությունը Շուկայի մասնակիցների և հանրության համար բացահայտման ենթակա չէ, բացառությամբ տեղաբաշխման յուրաքանչյուր մասնակցին՝ իրեն վերաբերող տեղեկատվության տրամադրման մասով:
- 3) Առանց դեպոնացման պայմաններում արտաժողովով առևտրի վերաբերյալ առևտրի մասնակիցներին և հանրությանը տեղեկատվության բացահայտման (տրամադրման) գործընթացը կարգավորվում է Օպերատորի «Էլեկտրոնային եղանակով առանց դեպոնացման արտաժողովի առևտրի կանոններով»:

Գլուխ 3. Առևտրի մասնակիցներին տեղեկատվության բացահայտումը

- 1) Առևտրի մասնակիցներին տեղեկատվությունը տրամադրվում է Օպերատորի կողմից կազմակերպվող առևտուրը սկսվելուց առաջ, նախաառևտրային, առևտրային և հետառևտրային նստաշրջանների ընթացքում և առևտրի ավարտից հետո:
- 2) Առևտրի մասնակիցներին տեղեկատվությունը տրամադրվում է առևտրային համակարգի

միջոցով՝ էլեկտրոնային ձևով:

Գլուխ 4. Առևտրի մասնակիցներին տեղեկատվության բացահայտումը մինչև առևտուրը սկսվելը

- 1) Օպերատորի կողմից կազմակերպվող առևտուրը սկսվելուց առաջ առևտրի մասնակիցներին տեղեկատվության տրամադրումը սկսվում է տվյալ առևտրային օրվա նախաառևտրային նստաշրջանի սկսման պահից 20 րոպե առաջ և ավարտվում է նախաառևտրային նստաշրջանի սկսման պահին:
- 2) Օպերատորի կողմից առևտրին թույլատրված ֆինանսական յուրաքանչյուր գործիքի առանձնահատկություններից ելնելով՝ նախաառևտրային նստաշրջանի սկսվելուց առաջ ֆինանսական յուրաքանչյուր գործիքի առևտրի մասնակիցներին տրամադրվող տեղեկատվությունը ներառում է՝
 - ա) Օպերատորի կողմից առևտրին թույլատրված՝ ֆինանսական յուրաքանչյուր գործիքի վերաբերյալ՝
 - (1) թողարկողի անվանումը՝ կորպորատիվ արժեթղթերի և պետական պարտատոմսերի դեպքում,
 - (2) տվյալ ֆինանսական գործիքի հապավումը,
 - (3) տարբերակիչ ծածկագիրը՝ կորպորատիվ արժեթղթերի և պետական պարտատոմսերի դեպքում,
 - (4) հարթակը կամ բորսայական ցուցակը՝ կորպորատիվ արժեթղթերի դեպքում,
 - (5) թողարկման և մարման ամսաթվերը՝ կորպորատիվ և պետական պարտատոմսերի դեպքում:
 - բ) շուկայի մասնակիցների անվանումը, առևտրային կոդը, կապի միջոցները:
 - գ) Օպերատորի կողմից կազմակերպվող առևտրին թույլատրված՝ ֆինանսական յուրաքանչյուր գործիքի գնանշումների վերաբերյալ՝
 - (1) տվյալ ֆինանսական գործիքի հապավումը,
 - (2) վերջին գործարքի առարկա տվյալ ֆինանսական գործիքի գինը, գործարքի առարկա տվյալ ֆինանսական գործիքի լոտերի քանակը, գործարքի կնքման ամսաթիվը և ժամը,
 - (3) վերջին գործարքի առարկա տվյալ ֆինանսական գործիքի գնի փոփոխությունը նախորդ գործարքի առարկա տվյալ ֆինանսական գործիքի գնի համեմատ,
 - (4) վերջին առևտրային նստաշրջանի փակման գինը,
 - (5) վերջին գործարքի առարկա տվյալ ֆինանսական գործիքի գնի փոփոխությունը վերջին առևտրային նստաշրջանի փակման գնի համեմատ:
 - դ) առնվազն վերջին 5 օրվա ընթացքում (եթե Օպերատորի գործադիր մարմնի որոշմամբ ավելի երկար ժամկետ սահմանված չէ) ֆինանսական գործիքներով կնքված յուրաքանչյուր գործարքի վերաբերյալ՝
 - (1) գործարքի առարկա տվյալ ֆինանսական գործիքի հապավումը,
 - (2) գործարքի առարկա տվյալ ֆինանսական գործիքի գինը,
 - (3) գործարքի կնքման ամսաթիվը և ժամը,
 - (4) գործարքի առարկա տվյալ ֆինանսական գործիքի լոտերի քանակը,
 - (5) ռեպո կամ սվոպ գործարքի հաստատման ամսաթիվը:
 - ե) շուկայի տվյալ մասնակցի անունից հանդես եկող առևտրի մասնակիցներին բացահայտվող տեղեկատվությունը ներառում է առնվազն վերջին 5 օրվա ընթացքում (եթե Օպերատորի գործադիր մարմնի որոշմամբ ավելի երկար ժամկետ սահմանված չէ) ֆինանսական գործիքներով շուկայի տվյալ մասնակցի անունից կնքված յուրաքանչյուր գործարքի վերաբերյալ՝
 - (1) գործարքի առարկա տվյալ ֆինանսական գործիքի հապավումը,
 - (2) գործարքի տեսակը (առք կամ վաճառք),

- (3) գործարքի առարկա տվյալ ֆինանսական գործիքի գինը,
 - (4) գործարքի առարկա տվյալ ֆինանսական գործիքի լրտերի քանակը,
 - (5) գործարքի ընդհանուր գումարը,
 - (6) գործարքի հերթական տարբերակիչ համարը,
 - (7) գործարքի կնքման ամսաթիվը և ժամը:
- զ) առնվազն վերջին 5 օրվա ընթացքում (եթե Օպերատորի գործադիր մարմնի որոշմամբ ավելի երկար ժամկետ սահմանված չէ) շուկայի տվյալ մասնակցի անունից կնքված յուրաքանչյուր ռեպո կամ սվոպ գործարքի վերաբերյալ շուկայի տվյալ մասնակցի անունից հանդես եկող առևտրի մասնակիցներին բացահայտվող տեղեկատվությունը ներառում է սույն գլխի 2) կետի ե) ենթակետի բոլոր կետերերում նշված տեղեկությունները, բացառությամբ (5) կետում նշվածի, ինչպես նաև՝ ռեպո կամ սվոպ գործարքի տարեկան տոկոսադրույքը և ռեպո կամ սվոպ գործարքի հաստատման ամսաթիվը և ժամը:
- է) տվյալ նախաառևտրային նստաշրջանին նախորդող առնվազն 5 օրվա ընթացքում (եթե Օպերատորի գործադիր մարմնի որոշմամբ ավելի երկար ժամկետ սահմանված չէ) Օպերատորին հայտնի դարձած՝ թողարկողի և/կամ տվյալ ֆինանսական գործիքի վերաբերյալ Օպերատորի մոտ առկա տեղեկությունների բոլոր այն փոփոխությունները, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ ֆինանսական գործիքների գների ձևավորման վրա:
- ը) ծառայողական կամ առևտրային գաղտնիք կազմող տեղեկություն չհամարվող այլ տեղեկություններ:

Գլուխ 5. Առևտրի մասնակիցներին տեղեկատվության բացահայտումը նախաառևտրային նստաշրջանի, բացման աճուրդի, առևտրային և հետ առևտրային նստաշրջանների ընթացքում

- 1) Նախաառևտրային նստաշրջանի ընթացքում առևտրի մասնակիցներին տեղեկատվությունը տրամադրվում է իրական ժամանակի ռեժիմում՝ նախաառևտրային նստաշրջանի սկսման պահից մինչև առևտրային նստաշրջանի բացման պահը:
- 2) Նախաառևտրային նստաշրջանի ընթացքում Օպերատորի կողմից կազմակերպվող առևտրի մասնակիցներին տրամադրվող տեղեկատվությունը, ի լրումն սույն կանոնների 4-րդ գլխի 2) կետում նշված տեղեկությունների, ներառում է՝
 - ա) տվյալ նախաառևտրային նստաշրջանի ընթացքում առևտրի մասնակիցների կողմից առևտրային համակարգ մուտքագրված, սակայն դեռևս չբավարարված Հայտերի ցանկը և դրանց բավարարման էական պայմանները (հայտի բավարարման էական պայմանները համապատասխանում են Օպերատորի «Առևտրի ընդհանուր կանոններ»-ում առևտրի տարբեր եղանակների համար սահմանված հայտի բավարարման էական պայմաններին),
 - բ) տվյալ նախաառևտրային նստաշրջանի ընթացքում առևտրի մասնակիցների կողմից առևտրային համակարգ մուտքագրված ռեպո կամ սվոպ հրապարակային գնանշումների վերաբերյալ՝
 - (1) առևտրի մասնակցի առևտրային կողը.
 - (2) ֆինանսական գործիքի բորսայական հապավումը.
 - (3) գնանշման տեսակը՝ դրամական փոխառության տրամադրում, դրամական փոխառության ստացում, ֆինանսական գործիքով փոխառության տրամադրում, ֆինանսական գործիքով փոխառության ստացում.
 - (4) մեկ լոտի գինը, ընդ որում՝ արտարժույթով արտահայտված արժեթղթերի դեպքում գինը նշվում է համապատասխան արտարժույթով (առկայության դեպքում).
 - (5) լրտերի քանակը.
 - (6) ռեպո կամ սվոպ տարեկան տոկոսադրույքը (առկայության դեպքում).

- (7) տվյալ ֆինանսական գործիքի ընթացիկ գնից զեղչը (առկայության դեպքում)։
- (8) ռեպո կամ սվոպ-ուղղակի և ռեպո կամ սվոպ-հետադարձ գործարքների միջև ընկած ժամանակահատվածում օրացուցային օրերի քանակը՝ 0-ից մինչև 366-ը (առկայության դեպքում)։
- գ) Օպերատորի կողմից առևտրին թույլատրված՝ ֆինանսական յուրաքանչյուր գործիքի գնանշումների վերաբերյալ՝
 - (1) տվյալ նախաառևտրային նստաշրջանի ընթացքում առևտրային համակարգ մուտքագրված գնման և վաճառքի լավագույն գները,
 - (2) տվյալ ֆինանսական գործիքի գնման և վաճառքի լոտերի ընդհանուր քանակը։
- 3) Առևտրային նստաշրջանի ընթացքում առևտրի մասնակիցներին տեղեկատվությունը տրամադրվում է իրական ժամանակի ռեժիմում՝ առևտրային նստաշրջանի սկսման պահից մինչև առևտրային նստաշրջանի ավարտը։
- 4) Առևտրային նստաշրջանի ընթացքում ֆինանսական յուրաքանչյուր գործիքի առևտրի մասնակիցներին տրամադրվող տեղեկատվությունը, ի լրումն սույն կանոնների 4-րդ և 5-րդ գլուխների 2) կետում նշված տեղեկությունների, ներառում է՝
 - ա) տվյալ առևտրային նստաշրջանի ընթացքում առևտրի մասնակիցների կողմից առևտրային համակարգ մուտքագրված, սակայն դեռևս չբավարարված Հայտերի ցանկը և դրանց բավարարման էական պայմանները (հայտի բավարարման էական պայմանները համապատասխանում են Օպերատորի «Առևտրի ընդհանուր կանոններ»-ում առևտրի տարբեր եղանակների համար սահմանված հայտի բավարարման էական պայմաններին),
 - բ) տվյալ առևտրային նստաշրջանի ընթացքում առևտրի մասնակիցների կողմից առևտրային համակարգ մուտքագրված ռեպո կամ սվոպ հրապարակային գնանշումների վերաբերյալ՝
 - (1) առևտրի մասնակցի առևտրային կոդը.
 - (2) ֆինանսական գործիքի բորսայական հապավումը.
 - (3) գնանշման տեսակը՝ դրամական փոխառության տրամադրում, դրամական փոխառության ստացում, ֆինանսական գործիքով փոխառության տրամադրում, ֆինանսական գործիքով փոխառության ստացում.
 - (4) մեկ լոտի գինը, ընդ որում՝ արտարժույթով արտահայտված արժեթղթերի դեպքում գինը նշվում է համապատասխան արտարժույթով (առկայության դեպքում).
 - (5) լոտերի քանակը.
 - (6) ռեպո կամ սվոպ տարեկան տոկոսադրույքը (առկայության դեպքում).
 - (7) տվյալ ֆինանսական գործիքի ընթացիկ գնից զեղչը (առկայության դեպքում).
 - (8) ռեպո կամ սվոպ-ուղղակի և ռեպո կամ սվոպ-հետադարձ գործարքների միջև ընկած ժամանակահատվածում օրացուցային օրերի քանակը՝ 0-ից մինչև 366-ը (առկայության դեպքում)։
- գ) Օպերատորի կողմից առևտրին թույլատրված՝ ֆինանսական յուրաքանչյուր գործիքի գնանշումների վերաբերյալ՝
 - (1) տվյալ առևտրային նստաշրջանի ընթացքում առևտրային համակարգ մուտքագրված գնման և վաճառքի լավագույն գները,
 - (2) տվյալ առևտրային նստաշրջանի ընթացքում կնքված գործարքների առավելագույն և նվազագույն գները,
 - (3) տվյալ առևտրային նստաշրջանի ընթացքում կնքված գործարքների առարկա տվյալ ֆինանսական գործիքի լոտերի քանակը,
 - (4) տվյալ առևտրային նստաշրջանի ընթացքում առևտրային համակարգ մուտքագրված վաճառքի և գնման լավագույն գների տարբերությունը։
- դ) տվյալ առևտրային նստաշրջանի ընթացքում կնքված յուրաքանչյուր գործարքի վերաբերյալ՝
 - (1) գործարքի առարկա տվյալ ֆինանսական գործիքի հապավումը,

- (2) գործարքի առարկա տվյալ ֆինանսական գործիքի գինը,
 - (3) գործարքի կնքման ամսաթիվը և ժամը,
 - (4) գործարքի առարկա տվյալ ֆինանսական գործիքի լոտերի քանակը,
 - (5) գործարքի հաստատման ամսաթիվը և ժամը՝ ռեպո կամ սվոպ գործարքի դեպքում:
- ե) շուկայի տվյալ մասնակցի անունից հանդես եկող առևտրի մասնակիցների կողմից տվյալ առևտրային նստաշրջանի ընթացքում կնքված յուրաքանչյուր գործարքի վերաբերյալ՝
- (1) գործարքի առարկա տվյալ ֆինանսական գործիքի հապավումը,
 - (2) գործարքի տեսակը (առք կամ վաճառք),
 - (3) գործարքի առարկա տվյալ ֆինանսական գործիքի գինը,
 - (4) գործարքի առարկա տվյալ ֆինանսական գործիքի լոտերի քանակը,
 - (5) գործարքի ընդհանուր գումարը,
 - (6) գործարքի հերթական տարբերակիչ համարը,
 - (7) գործարքի կնքման ամսաթիվը և ժամը:
- զ) շուկայի տվյալ մասնակցի անունից հանդես եկող առևտրի մասնակիցների կողմից տվյալ առևտրային նստաշրջանի ընթացքում կնքված յուրաքանչյուր ռեպո կամ սվոպ գործարքի վերաբերյալ տեղեկատվությունը ներառում է սույն գլխի 4) կետի ե) ենթակետի բոլոր կետերում նշված տեղեկությունները, բացառությամբ (5) կետում նշվածի, ինչպես նաև ռեպո կամ սվոպ գործարքի տարեկան տոկոսադրույքը և ռեպո կամ սվոպ գործարքի հաստատման ամսաթիվը և ժամը:
- է) Օպերատորի կողմից կազմակերպվող առևտրի համար նախատեսված՝ շուկայի տվյալ մասնակցի կողմից իր և իր հաճախորդների համար դեպոնացված ֆինանսական գործիքների և դրամական միջոցների մնացորդների և դրանց փոփոխության վերաբերյալ:
- ը) տվյալ առևտրային նստաշրջանի ընթացքում Օպերատորին հայտնի դարձած՝ թողարկողի և/կամ ֆինանսական յուրաքանչյուր գործիքի վերաբերյալ Օպերատորի մոտ առկա տեղեկությունների բոլոր այն փոփոխությունները, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ ֆինանսական յուրաքանչյուր գործիքի գների ձևավորման վրա:
- թ) ծառայողական կամ առևտրային գաղտնիք կազմող տեղեկություն չհամարվող այլ տեղեկություններ:
- 3) Սույն գլխի 4) կետի ա), դ) և ե) ենթակետերում նշված տեղեկություններն արտարժույթով հասցեական գործարքների վերաբերյալ բացահայտվում են միայն գործարքների կողմ հանդիսացող շուկայի մասնակիցների առևտրի մասնակիցներին:
- 4) Հետառևտրային նստաշրջանի ընթացքում առևտրի մասնակիցներին տեղեկատվությունը տրամադրվում է իրական ժամանակի ռեժիմում՝ հետառևտրային նստաշրջանի սկսման պահից մինչև առևտրի ավարտը:
- 5) Հետառևտրային նստաշրջանի ընթացքում ֆինանսական յուրաքանչյուր գործիքի առևտրի մասնակիցներին տրամադրվող տեղեկատվությունը, ի լրումն սույն գլխի 4) կետում նշված տեղեկությունների ներառում է՝
- ա) տվյալ հետառևտրային նստաշրջանի ընթացքում առևտրի մասնակիցների կողմից առևտրային համակարգ մուտքագրված, սակայն դեռևս չբավարարված Հայտերի ցանկը և դրանց բավարարման էական պայմանները (հայտի բավարարման էական պայմանները համապատասխանում են Օպերատորի «Առևտրի ընդհանուր կանոններ»-ում առևտրի տարբեր եղանակների համար սահմանված հայտի բավարարման էական պայմաններին),
- բ) տվյալ հետառևտրային նստաշրջանի ընթացքում կնքված յուրաքանչյուր գործարքի վերաբերյալ՝
- (1) գործարքի առարկա տվյալ ֆինանսական գործիքի հապավումը,
 - (2) գործարքի առարկա տվյալ ֆինանսական գործիքի միջին կշռված գինը,

- (3) գործարքի կնքման ամսաթիվը և ժամը,
 - (4) գործարքի առարկա տվյալ ֆինանսական գործիքի լուտերի քանակը:
- 6) Առևտրի ավարտից հետո առևտրի մասնակիցներին տրամադրվում է առևտրային և հետառևտրային նստաշրջանների ընթացքում սույն կանոններին համապատասխան նրանց հասանելի տեղեկատվությունը՝ առևտրային և հետառևտրային նստաշրջանների փակման դրությամբ:
- 7) Սույն կանոնների 4-րդ և 5-րդ գլուխներով սահմանված տեղեկատվությունը առևտրի մասնակիցներին տրամադրվում է անվճար:

Գլուխ 6. Արժեթղթերի տեղաբաշխման մասնակիցներին տեղեկատվության բացահայտումը տեղաբաշխման նստաշրջանի ընթացքում

- 1) Տեղաբաշխման նստաշրջանի ընթացքում արժեթղթերի տեղաբաշխման մասնակիցներին տեղեկատվությունը տրամադրվում է իրական ժամանակի ռեժիմում՝ տեղաբաշխման նստաշրջանի սկսման պահից մինչև տեղաբաշխման նստաշրջանի ավարտը:
- 2) Բաց ստանդարտ աճուրդի ընթացքում արժեթղթերի տեղաբաշխման մասնակիցներին տրամադրվող տեղեկատվությունը ներառում է՝
- ա) տվյալ աճուրդի ընթացքում տեղաբաշխման մասնակիցների կողմից տեղաբաշխման համակարգ մուտքագրված, սակայն դեռևս չբավարարված Հայտերի ցանկը և դրանց բավարարման էական պայմանները (հայտի բավարարման էական պայմանները համապատասխանում են Օպերատորի «Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններ»-ում աճուրդի տարբեր եղանակների համար սահմանված հայտի բավարարման էական պայմաններին),
 - բ) Օպերատորի կողմից տվյալ աճուրդին թույլատրված՝ արժեթղթերի գնանշումների վերաբերյալ՝
 - (1) տվյալ աճուրդի ընթացքում տեղաբաշխման համակարգ մուտքագրված գնման և վաճառքի լավագույն գները,
 - (2) տվյալ աճուրդի ընթացքում կնքված գործարքների առարկա արժեթղթերի քանակը,
 - (3) տվյալ աճուրդի ընթացքում տեղաբաշխման համակարգ գնման հայտ մուտքագրած տեղաբաշխման մասնակցի առևտրային կողը (անվանական բաց ստանդարտ աճուրդի դեպքում)
- 3) Տեղաբաշխման նստաշրջանի ընթացքում կնքված յուրաքանչյուր գործարքի մասին արժեթղթերի տեղաբաշխման մասնակիցներին տրամադրվող տեղեկատվությունը ներառում է՝
- ա) տվյալ տեղաբաշխման նստաշրջանի ընթացքում կնքված յուրաքանչյուր գործարքի վերաբերյալ՝
 - (1) տեղաբաշխման գործարքի առարկա արժեթղթերի հապավումը,
 - (2) տեղաբաշխման գործարքի առարկա արժեթղթի գինը,
 - (3) տեղաբաշխման գործարքի կնքման ամսաթիվը և ժամը,
 - (4) տեղաբաշխման գործարքի առարկա արժեթղթերի քանակը,
 - բ) տեղաբաշխման տվյալ մասնակցի լիազորված ներկայացուցչի կողմից տվյալ տեղաբաշխման նստաշրջանի ընթացքում կնքված յուրաքանչյուր գործարքի վերաբերյալ՝
 - (1) տեղաբաշխման գործարքի առարկա արժեթղթերի հապավումը,
 - (2) տեղաբաշխման գործարքի տեսակը (առք կամ վաճառք),
 - (3) տեղաբաշխման գործարքի առարկա արժեթղթերի գինը,
 - (4) տեղաբաշխման գործարքի առարկա արժեթղթերի քանակը,
 - (5) տեղաբաշխման գործարքի ընդհանուր գումարը,
 - (6) տեղաբաշխման գործարքի հերթական տարբերակիչ համարը,

- (7) տեղաբաշխման գործարքի կնքման ամսաթիվը և ժամը:
- 4) Տեղաբաշխման նստաշրջանի ավարտից հետո արժեթղթերի տեղաբաշխման մասնակիցներին տրամադրվում է տեղաբաշխման նստաշրջանի ընթացքում սույն կանոններին համապատասխան նրանց հասանելի տեղեկատվությունը՝ տեղաբաշխման նստաշրջանի փակման դրությամբ:
 - 5) Սույն գլխով սահմանված տեղեկատվությունը արժեթղթերի տեղաբաշխման մասնակիցներին տրամադրվում է անվճար:

Գլուխ 7. Պետական պարտատոմսերի աճուրդների մասնակիցներին տեղեկատվության բացահայտումը մինչև աճուրդների բացումը, աճուրդների ընթացքում և աճուրդների փակումից հետո

- 1) Պետական պարտատոմսերի տեղաբաշխման և/կամ հետգնման աճուրդների (այսուհետ՝ Աճուրդ) անցկացման ժամանակ Աճուրդի մասնակիցներին և/կամ նրանց անունից հանդես եկող առևտրի մասնակիցներին տեղեկատվությունը տրամադրվում է մինչև աճուրդի բացումը, աճուրդի ընթացքում և աճուրդի փակումից հետո:
- 2) Օպերատորի կողմից մինչև աճուրդի բացումը և աճուրդի փակումից հետո տեղեկատվությունը հայտարարության ձևով տրամադրվում է ՍԻԲԻԷՆԵթ համակարգչային ցանցով, իսկ աճուրդի ընթացքում տեղեկատվությունը տրամադրվում է իրական ժամանակի ռեժիմում՝ աճուրդի բացման պահից մինչև աճուրդի փակումը:
- 3) Մինչև աճուրդի բացումը Օպերատորի կողմից աճուրդի մասնակիցներին տրամադրվում է սույն գլխի 4) - 7) կետերով նախատեսված տեղեկատվությունը:
- 4) Օպերատորի կողմից պետական պարտատոմսերի թողարկման վերաբերյալ տեղեկատվությունը աճուրդի մասնակիցներին տրամադրվում է տվյալ դասի պետական պարտատոմսի թողարկման ամսաթվից առնվազն հինգ աշխատանքային օր առաջ ((երկու աշխատանքային օր առաջ, եթե կարճաժամկետ պարտատոմս է, որի մարման ժամկետը մինչև 13 շաբաթ է)) մինչև ժամը 16:00-ը, որն իր մեջ ներառում է՝
 - ա) պետական պարտատոմսի միջազգային տարբերակիչ ծածկագիրը,
 - բ) պետական պարտատոմսի դասը (տեսակը),
 - գ) պետական պարտատոմսի թողարկման ծավալը,
 - դ) պետական պարտատոմսի թողարկման ամսաթիվը (օր/ամիս/տարի),
 - ե) պետական պարտատոմսի մարման ամսաթիվը (օր/ամիս/տարի),
 - զ) արժեկտրոնային պետական պարտատոմսի դեպքում՝ արժեկտրոնի առաջին վճարման ամսաթիվը և արժեկտրոնի տարեկան եկամտաբերությունը:
- 5) Օպերատորի կողմից պետական պարտատոմսերի տեղաբաշխման կամ հետգնման աճուրդի անցկացման մասին տեղեկատվությունը աճուրդի մասնակիցներին տրամադրվում է տվյալ աճուրդի անցկացման ամսաթվից առնվազն երկու աշխատանքային օր առաջ (մեկ աշխատանքային օր առաջ, եթե կարճաժամկետ պարտատոմս է, որի մարման ժամկետը մինչև 13 շաբաթ է) մինչև ժամը 16:00-ը, որն իր մեջ ներառում է՝
 - ա) տվյալ աճուրդին ենթակա պետական պարտատոմսերի վերաբերյալ՝
 - (1) պետական պարտատոմսերի աճուրդի տարբերակիչ ծածկագիրը,
 - (2) պետական պարտատոմսերի միջազգային տարբերակիչ ծածկագիրը,
 - (3) պետական պարտատոմսերի դասը (տեսակը),
 - (4) պետական պարտատոմսերի թողարկման ծավալը,
 - (5) պետական պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, մարման և մարման վճարման ամսաթվերը (օր/ամիս/տարի),
 - (6) աճուրդի համար նախատեսված պետական պարտատոմսերի ծավալը,
 - (7) արժեկտրոնային պետական պարտատոմսի դեպքում՝ արժեկտրոնի առաջին վճարման ամսաթիվը և արժեկտրոնի տարեկան եկամտաբերությունը:

- բ) տվյալ աճուրդի պայմանների վերաբերյալ՝
- (1) աճուրդի տեսակը (տեղաբաշխում կամ հետգնում),
 - (2) աճուրդի մասնակիցների կողմից գնման/վաճառքի հայտերի մուտքագրման (աճուրդի բացման) և մուտքագրման դադարեցման (աճուրդի փակման) ժամերը,
 - (3) աճուրդի եկամտաբերությունը՝ առկայության դեպքում,
 - (4) աճուրդի և վերջնահաշվարկի ամսաթվերը (օր/ամիս/տարի):
- 6) Օպերատորը պետական պարտատոմսերի տեղաբաշխման լրացուցիչ աճուրդի նախորդ աշխատանքային օրը՝ մինչև ժամը 16.00-ը, աճուրդի մասնակիցներին է տրամադրում տեղաբաշխման լրացուցիչ աճուրդի կազմակերպման մասին սույն գլխի 5) կետով նախատեսված տեղեկատվությունը, ինչպես նաև տեղաբաշխման լրացուցիչ աճուրդի եկամտաբերությունը և տեղաբաշխման լրացուցիչ աճուրդի ժամանակ տեղաբաշխման ենթակա պարտատոմսերի ծավալը՝ տեղաբաշխման աճուրդի ընթացքում տեղաբաշխված պարտատոմսերի ընդհանուր ծավալի նկատմամբ տոկոսային հարաբերությամբ:
- 7) Հայտարարված աճուրդը չեղյալ համարելու մասին թողարկողի որոշման մասին աճուրդի ամսաթվից առնվազն մեկ աշխատանքային օր առաջ՝ մինչև ժամը 16.00-ը Օպերատորը տեղեկացնում է աճուրդի մասնակիցներին:
- 8) Աճուրդի ընթացքում աճուրդի մասնակիցների անունից հանդես եկող առևտրի մասնակիցներին տեղեկատվությունը տրամադրվում է իրական ժամանակի ռեժիմում՝ աճուրդի բացման պահից մինչև աճուրդի փակումը:
- 9) Աճուրդի ընթացքում աճուրդի մասնակիցների անունից հանդես եկող առևտրի մասնակիցներին տրամադրվող տեղեկատվությունը, ի լրումն սույն գլխի 5) և/կամ 6) կետում նշված տեղեկությունների ներառում է նաև տվյալ աճուրդի ընթացքում աճուրդի տվյալ մասնակցի անունից հանդես եկող առևտրի մասնակցի կողմից համակարգ մուտքագրված, սակայն դեռևս չբավարարված Հայտերի ցանկը և դրանց բավարարման էական պայմանները: Ընդ որում, աճուրդի տվյալ մասնակցին հասանելի է միայն իր անունից հանդես եկող առևտրի մասնակցի կողմից համակարգ մուտքագրված, սակայն դեռևս չբավարարված Հայտերի ցանկը և դրանց բավարարման էական պայմանները: Հայտի բավարարման էական պայմանները համապատասխանում են Օպերատորի «Պետական պարտատոմսերի աճուրդների կազմակերպման կանոններ»-ում աճուրդի համար սահմանված հայտի բավարարման էական պայմաններին:
- 10) Աճուրդի փակումից հետո աճուրդի մասնակիցների անունից հանդես եկող առևտրի մասնակիցներին տվյալ աճուրդի ընթացքում աճուրդի կնքված գործարքների վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է առևտրային համակարգի միջոցով՝ աճուրդի փակման պահից սկսած, և ներառում է հետևյալ տեղեկությունները՝
- ա) տվյալ աճուրդի ընթացքում կնքված գործարքների վերաբերյալ՝
- (1) գործարքի առարկա պետական պարտատոմսերի աճուրդի տարբերակիչ ծածկագիրը,
 - (2) գործարքի հերթական տարբերակիչ համարը,
 - (3) գործարքի առարկա պետական պարտատոմսերի եկամտաբերությունը,
 - (4) գործարքի կնքման ամսաթիվը և ժամը,
 - (5) գործարքի առարկա պետական պարտատոմսերի անվանական ծավալը:
- բ) տվյալ աճուրդի ընթացքում աճուրդի տվյալ մասնակցի անունից հանդես եկող առևտրի մասնակիցների կողմից տվյալ օրվա ընթացքում կնքված յուրաքանչյուր գործարքի վերաբերյալ՝
- (1) աճուրդի մասնակցի առևտրային կոդը,
 - (2) առևտրի մասնակցի ծածկագիրը,
 - (3) գործարքի առարկա պետական պարտատոմսերի աճուրդի տարբերակիչ ծածկագիրը,
 - (4) գործարքի տեսակը (առք կամ վաճառք),
 - (5) գործարքի շահառուի կոդը՝ սեփական (Principal) կամ հաճախորդի (Agent)

- (6) գործարքի առարկա պետական պարտատոմսերի եկամտաբերությունը,
 - (6) գործարքի առարկա պետական պարտատոմսերի անվանական ծավալը,
 - (7) գործարքի ընդհանուր գումարը,
 - (8) գործարքի հերթական տարբերակիչ համարը,
 - (9) գործարքի կնքման ժամը,
 - (10) վերջնահաշվարկի ամսաթիվը:
- 11) Ի լրումն սույն գլխի 10) կետում նշված տեղեկությունների՝ աճուրդի փակման պահից 5 (հինգ) րոպեի ընթացքում ՍԻԲԻԷՆԵթ համակարգչային ցանցով՝ աճուրդի մասնակիցներին տրամադրվում է նաև աճուրդի արդյունքների վերաբերյալ հետևյալ ամփոփ տեղեկատվությունը՝
- ա) աճուրդի տեսակը (տեղաբաշխում կամ հետզնում),
 - բ) տվյալ պետական պարտատոմսերի միջազգային տարբերակիչ ծածկագիրը,
 - գ) աճուրդի և վերջնահաշվարկի ամսաթվերը (օր/ամիս/տարի),
 - դ) պետական պարտատոմսերի թողարկման և մարման ամսաթվերը (օր/ամիս/տարի),
 - ե) տվյալ պետական պարտատոմսերի թողարկման ծավալը,
 - զ) արժեկտրոնի տարեկան եկամտաբերությունը և վճարման պարբերականությունը (առկայության դեպքում),
 - է) աճուրդի մասնակիցների քանակը,
 - ը) աճուրդին ենթակա պետական պարտատոմսերի ծավալը,
 - թ) ներկայացված առաջարկությունների ընդհանուր ծավալը,
 - ժ) բավարարված առաջարկությունների ընդհանուր ծավալը,
 - ժա) աճուրդի կտրման եկամտաբերությունը,
 - ժբ) բավարարված առաջարկությունների առավելագույն, նվազագույն և միջին կշռված եկամտաբերությունները,
 - ժգ) աճուրդի կտրման եկամտաբերությամբ ներկայացված հայտերի բավարարման տոկոսը:
- 12) Սույն գլխով սահմանված տեղեկատվությունը Աճուրդի մասնակիցներին և նրանց անունից հանդես եկող առևտրի մասնակիցներին տրամադրվում է անվճար, և կարող է ներառել նաև ծառայողական կամ առևտրային գաղտնիք կազմող տեղեկություն չհամարվող այլ տեղեկություններ:

Գլուխ 8. Հանրությանը տեղեկատվության բացահայտումը

- 1) Հանրությանը տեղեկատվության բացահայտումն իրականացվում է Օպերատորի պաշտոնական ինտերնետային էջում՝ www.amx.am:
- 2) Հանրությանը տեղեկատվության բացահայտումը կարող է իրականացվել նաև հրապարակային էլեկտրոնային հաղորդակցության, տպագիր մամուլի և/կամ զանգվածային լրատվության այլ միջոցներով, որոնց ցանկը սահմանվում է Օպերատորի գործադիր մարմնի ղեկավարի որոշմամբ: Օպերատորի կողմից հանրությանը տեղեկատվության բացահայտման ձևը սահմանվում է Օպերատորի գործադիր մարմնի ղեկավարի որոշմամբ:
- 3) Օպերատորի պաշտոնական ինտերնետային էջում հանրությանը տեղեկատվության բացահայտումն իրականացվում է սույն գլխի 6) - 14) կետերին համապատասխան՝ ընթացիկ, օրական, ամսական, եռամսյակային և տարեկան պարբերականությամբ, եթե այլ բան սահմանված չէ սույն կանոններով:
- 4) Սույն գլխի 2) կետին համապատասխան ընդունված որոշմամբ հաստատված լրատվամիջոցներով հանրությանը տեղեկատվության բացահայտումը կարող է իրականացվել օրական, ամսական, եռամսյակային և/կամ տարեկան պարբերականությամբ:
- 5) Սույն գլխի 4) կետին համապատասխան օրական, ամսական, եռամսյակային և տարեկան

- պարբերականությամբ հանրությանը բացահայտվող տեղեկատվությունը պետք է ներառի միայն համապատասխան ժամանակաշրջանի համար սույն գլխի 8) - 14) կետերով սահմանված որոշակի տեղեկություններ, որոնց կազմը սահմանվում է Օպերատորի գործադիր մարմնի ղեկավարի որոշմամբ:
- 6) Օպերատորի կողմից հանրությանը բացահայտվող ընթացիկ առևտրի վերաբերալ տեղեկատվությունը Օպերատորի կողմից առևտրին թույլատրված՝ ֆինանսական յուրաքանչյուր գործիքի համար ներառում է՝
- ա) թողարկողի անվանումը՝ կորպորատիվ արժեթղթերի դեպքում,
 - բ) տվյալ ֆինանսական գործիքի հապավումը,
 - գ) տարբերակիչ ծածկագիրը՝ կորպորատիվ արժեթղթերի և պետական պարտատոմսերի դեպքում,
 - դ) հարթակը կամ բորսայական ցուցակը՝ կորպորատիվ արժեթղթերի դեպքում,
 - ե) տվյալ առևտրային նստաշրջանի բացման, նվազագույն, առավելագույն և միջին կշռված գները (պարտատոմսերի դեպքում՝ եկամտաբերությունները),
 - զ) տվյալ առևտրային նստաշրջանի ընթացքում կնքված գործարքների քանակը, գործարքների առարկա տվյալ ֆինանսական գործիքի լոտերի քանակը, գործարքների ծավալը (արտահայտված ՀՀ դրամով կամ արտարժույթով՝ արտարժույթով արտահայտված կորպորատիվ պարտատոմսերի դեպքում), իսկ վարկային ռեսուրսների դեպքում՝ նաև գործարքի մարման ամսաթիվը,
 - է) տվյալ առևտրային նստաշրջանի ընթացքում կնքված վերջին գործարքի գինը, լոտերի քանակը և գործարքի ծավալը (արտահայտված ՀՀ դրամով կամ արտարժույթով՝ արտարժույթով արտահայտված կորպորատիվ պարտատոմսերի դեպքում),
 - ը) տվյալ առևտրային նստաշրջանի ընթացքում կնքված վերջին գործարքի գնի փոփոխությունը նախորդ առևտրային նստաշրջանի փակման գնի համեմատ (պարտատոմսերի դեպքում՝ եկամտաբերության փոփոխությունը):
- 7) Օպերատորի կողմից հանրությանը բացահայտվող ընթացիկ առևտրի վերաբերալ տեղեկատվությունը ռեպո կամ սվոպ գործարքների վերաբերյալ ի թիվս սույն գլխի 6) կետի բ) ենթակետում նշված տեղեկության ներառում է նաև՝
- ա) ռեպո կամ սվոպ-ուղղակի գործարքի գումարը,
 - բ) ռեպո կամ սվոպ-հետադարձ գործարքի գումարը,
 - գ) ռեպո կամ սվոպ-ուղղակի և ռեպո կամ սվոպ-հետադարձ գործարքների միջև առկա ժամանակահատվածը (օրերով),
 - դ) ռեպո կամ սվոպ տոկոսադրույքը (տարեկան),
 - ե) ռեպո կամ սվոպ գործարքի գործողության ժամկետի փոփոխության ամսաթիվը,
 - զ) ռեպո կամ սվոպ գործարքի գործողության ժամկետի փոփոխության ժամանակահատվածը (օրերով),
 - է) ռեպո կամ սվոպ փոփոխված տոկոսադրույքը (տարեկան),
 - ը) ռեպո կամ սվոպ գործարքի կնքման ամսաթիվը,
 - թ) ռեպո կամ սվոպ գործարքի մարման ամսաթիվը:
- 8) Օպերատորի կողմից հանրությանը բացահայտվող օրական տեղեկատվությունը Օպերատորի կողմից առևտրին թույլատրված՝ ֆինանսական յուրաքանչյուր գործիքի համար ներառում է՝
- ա) թողարկողի անվանումը՝ կորպորատիվ արժեթղթերի դեպքում,
 - բ) տվյալ ֆինանսական գործիքի հապավումը,
 - գ) տարբերակիչ ծածկագիրը՝ կորպորատիվ արժեթղթերի և պետական պարտատոմսերի դեպքում,
 - դ) հարթակը կամ բորսայական ցուցակը՝ կորպորատիվ արժեթղթերի դեպքում,
 - ե) տվյալ առևտրային նստաշրջանի ընթացքում կնքված վերջին գործարքի գնի փոփոխությունը նախորդ առևտրային նստաշրջանի փակման գնի համեմատ (պարտատոմսերի դեպքում՝ միջին կշռված եկամտաբերության փոփոխությունը),

- գ) տվյալ առևտրային նստաշրջանի բացման, փակման, նվազագույն, առավելագույն և միջին կշռված գները (պարտատոմսերի դեպքում՝ եկամտաբերությունները),
 - է) տվյալ առևտրային նստաշրջանի փակման պահին առևտրային համակարգում առկա գնման և վաճառքի լավագույն հայտերի գները (պարտատոմսերի դեպքում՝ եկամտաբերությունները),
 - ը) տվյալ առևտրային նստաշրջանի ընթացքում կնքված գործարքների քանակը, գործարքների առարկա տվյալ ֆինանսական գործիքի լոտերի քանակը, գործարքների ծավալը (արտահայտված ՀՀ դրամով կամ արտարժույթով՝ արտարժույթով արտահայտված կորպորատիվ պարտատոմսերի դեպքում), իսկ վարկային ռեսուրսների դեպքում՝ նաև գործարքի մարման ամսաթիվը:
- 9) Օպերատորի կողմից հանրությանը բացահայտվող օրական տեղեկատվությունը ռեպո կամ սվոպ գործարքների վերաբերյալ ի թիվս սույն գլխի 8) կետի բ) ենթակետում նշված տեղեկության ներառում է նաև՝
- ա) ռեպո կամ սվոպ-ուղղակի գործարքի գումարը,
 - բ) ռեպո կամ սվոպ-հետադարձ գործարքի գումարը,
 - գ) ռեպո կամ սվոպ-ուղղակի և ռեպո կամ սվոպ-հետադարձ գործարքների միջև առկա ժամանակահատվածը (օրերով),
 - դ) ռեպո կամ սվոպ տոկոսադրույքը (տարեկան),
 - ե) ռեպո կամ սվոպ գործարքի գործողության ժամկետի փոփոխության ամսաթիվը,
 - զ) ռեպո կամ սվոպ գործարքի գործողության ժամկետի փոփոխության ժամանակահատվածը (օրերով),
 - է) ռեպո կամ սվոպ փոփոխված տոկոսադրույքը (տարեկան),
 - ը) ռեպո կամ սվոպ գործարքի կնքման ամսաթիվը,
 - թ) ռեպո գործարքի մարման ամսաթիվը:
- 10) Օպերատորի կողմից հանրությանը բացահայտվող օրական տեղեկատվությունը արժեթղթերի տեղաբաշխման արդյունքների վերաբերյալ ներառում է՝
- ա) թողարկողի անվանումը,
 - բ) տվյալ արժեթղթերի հապավումը,
 - գ) տեղաբաշխման սկիզբը (օր/ամիս/տարի),
 - դ) տեղաբաշխման ավարտը (օր/ամիս/տարի),
 - ե) տեղաբաշխողի անվանումը,
 - զ) տեղաբաշխմանը ներկայացված առաջարկությունների ընդհանուր ծավալը (արտահայտված ՀՀ դրամով կամ արտարժույթով՝ արտարժույթով արտահայտված պարտատոմսերի դեպքում),
 - է) մրցակցային հայտերով ներկայացված առաջարկությունների ծավալը (արտահայտված ՀՀ դրամով կամ արտարժույթով՝ արտարժույթով արտահայտված պարտատոմսերի դեպքում),
 - ը) ոչ մրցակցային հայտերով ներկայացված առաջարկությունների ծավալը (արտահայտված ՀՀ դրամով կամ արտարժույթով՝ արտարժույթով արտահայտված պարտատոմսերի դեպքում),
 - թ) բավարարված առաջարկությունների ընդհանուր ծավալը (արտահայտված ՀՀ դրամով կամ արտարժույթով՝ արտարժույթով արտահայտված պարտատոմսերի դեպքում),
 - ժ) տեղաբաշխված արժեթղթերի կտրման գինը (եկամտաբերությամբ աճուրդի դեպքում՝ կտրման եկամտաբերությունը),
 - ժա) տեղաբաշխված արժեթղթերի միջին կշռված գինը (եկամտաբերությամբ աճուրդի դեպքում՝ միջին կշռված եկամտաբերությունը):
- 11) Օպերատորի կողմից պետական պարտատոմսերի թողարկման, աճուրդների կազմակերպման, աճուրդների արդյունքների վերաբերյալ և/կամ հայտարարված աճուրդը չեղյալ համարելու վերաբերյալ տեղեկատվության բացահայտումը հանրությանն իրականացվում է սույն կանոնների 7-րդ գլխի 4) - 7), ինչպես նաև 11) կետերում նշված

- ծավալով և ժամկետներում՝ իր ինտերնետային կայքում հայտարարություն տեղադրելու և զարգվածային լրատվամիջոցներին ուղարկելու միջոցով:
- 12) Օպերատորի կողմից հանրությանը բացահայտվող ամսական, եռամսյակային և տարեկան տեղեկատվությունը Օպերատորի կողմից առևտրին թույլատրված՝ ֆինանսական յուրաքանչյուր գործիքի համար ներառում է՝
- ա) թողարկողի անվանումը՝ կորպորատիվ արժեթղթերի դեպքում,
 - բ) տվյալ ֆինանսական գործիքի հապավումը,
 - գ) տարբերակիչ ծածկագիրը՝ կորպորատիվ արժեթղթերի և պետական պարտատոմսերի դեպքում,
 - դ) հարթակը կամ բորսայական ցուցակը՝ կորպորատիվ արժեթղթերի դեպքում,
 - ե) տվյալ ժամանակահատվածի նվազագույն, առավելագույն և միջին կշռված գները (պարտատոմսերի դեպքում՝ եկամտաբերությունները),
 - զ) տվյալ ժամանակահատվածում կնքված գործարքների քանակը, գործարքների առարկա տվյալ ֆինանսական գործիքի լրտերի քանակը, ընդհանուր ծավալը (արտահայտված ՀՀ դրամով կամ արտարժույթով՝ արտարժույթով արտահայտված կորպորատիվ պարտատոմսերի դեպքում), իսկ վարկային ռեսուրսների դեպքում՝ նաև գործարքի մարման ամսաթիվը,
 - է) տվյալ ժամանակահատվածում կնքված վերջին գործարքի առարկա տվյալ ֆինանսական գործիքի գինը և գործարքի կնքման ամսաթիվը (պարտատոմսերի դեպքում՝ եկամտաբերությունը):
- 13) Օպերատորի կողմից ռեպո կամ սվոպ գործարքների վերաբերյալ հանրությանը բացահայտվող ամսական, եռամսյակային և/կամ տարեկան տեղեկատվությունը ի թիվս սույն գլխի 12) կետի բ) ենթակետում նշված տեղեկության ներառում է նաև՝
- ա) ռեպո կամ սվոպ-ուղղակի գործարքի գումարը,
 - բ) ռեպո կամ սվոպ-հետադարձ գործարքի գումարը,
 - գ) ռեպո կամ սվոպ-ուղղակի և ռեպո կամ սվոպ-հետադարձ գործարքների միջև առկա ժամանակահատվածը (օրերով),
 - դ) ռեպո կամ սվոպ տոկոսադրույքը (տարեկան),
 - ե) ռեպո կամ սվոպ գործարքի գործողության ժամկետի փոփոխության ամսաթիվը,
 - զ) ռեպո կամ սվոպ գործարքի գործողության ժամկետի փոփոխության ժամանակահատվածը (օրերով),
 - է) ռեպո կամ սվոպ փոփոխված տոկոսադրույքը (տարեկան),
 - ը) ռեպո կամ սվոպ գործարքի կնքման ամսաթիվը,
 - թ) ռեպո կամ սվոպ գործարքի մարման ամսաթիվը:
- 14) Արտարժույթի առևտրի վերաբերյալ սույն գլխի 6), 8) և 12) կետերում նշված տեղեկությունները բացահայտվում են երկկողմանի անընդհատ աճուրդի եղանակով կնքված գործարքների մասով:
- 15) Օպերատորի կողմից հանրությանը բացահայտվող թողարկողի և թողարկողի բաժնային արժեթղթերի վերաբերյալ տեղեկատվությունը, ներառում է՝
- ա) թողարկողի լրիվ և կրճատ ավանումը, հասցեն, ինտերնետային էջի հասցեն և կապի միջոցները,
 - բ) բաժնային արժեթղթերի հապավումը, բաժնային արժեթղթերի դասը (տեսակը), հարթակը կամ բորսայական ցուցակը և տարբերակիչ ծածկագիրը,
 - գ) բաժնային արժեթղթերի առևտրին թույլատրման ամսաթիվը, անվանական արժեքը (արտահայտված ՀՀ դրամով), թողարկման քանակը, թողարկման ծավալը (արտահայտված ՀՀ դրամով), շրջանառության մեջ գտնվող բաժնային արժեթղթերի քանակը, շրջանառության մեջ գտնվող բաժնային արժեթղթերի ծավալը (արտահայտված ՀՀ դրամով):
- 16) Օպերատորի կողմից հանրությանը բացահայտվող թողարկողի և թողարկողի կորպորատիվ պարտատոմսերի վերաբերյալ տեղեկատվությունը ի թիվս սույն գլխի 15)

կետում նշված տեղեկությունների ներառում է նաև՝

- ա) կորպորատիվ պարտատոմսերի թողարկման ամսաթիվը, տեղաբաշխման ավարտը, ժամկետայնությունը և մարման ամսաթիվը,
 - բ) կորպորատիվ պարտատոմսերի արժեկտրոնի եկամտաբերությունը, արժեկտրոնի վճարումների քանակը և արժեկտրոնի հաշվարկման ամսաթվերը:
- 17) Օպերատորի գործադիր մարմնի որոշմամբ կարող է սահմանվել՝ ծառայողական կամ առևտրային գաղտնիք կազմող տեղեկություն չհամարվող այլ տեղեկություններ:
- 18) Ընթացիկ շուկայական արժեքից էական շեղումով կնքված գործարքների վերաբերյալ հանրությանը բացահայտվող տեղեկությունները՝ ամբողջությամբ կամ մասամբ, Օպերատորի գործադիր մարմնի որոշմամբ և ՀՀ կենտրոնական բանկի համաձայնությամբ կարող են հրապարակվել առանձնացված: Այդ դեպքում սույն կետում նշված գործարքների գները չեն ներառվում տվյալ առևտրային օրվա ընթացքում այդ գործարքների առարկա ֆինանսական գործիքներով կնքված գործարքների բացման, փակման, առավելագույն, նվազագույն և միջին կշռված գների հաշվարկում, իսկ եթե արդեն ներառվել են, ապա հանվում են՝ հանրությանը բացահայտված համապատասխան տեղեկություններում կատարելով անհրաժեշտ փոփոխություններ: ՀՀ կենտրոնական բանկի հետ համաձայնեցնելու նպատակով Օպերատորի գործադիր մարմնի ղեկավարի որոշումը ՍիԲիԷՆԵթ համակարգչային ցանցով ուղարկվում է ՀՀ կենտրոնական բանկի լիազորված ներկայացուցչին և համարվում է համաձայնեցված, եթե ուղարկելուց հետո մեկ ժամվա ընթացքում ստացվում է դրական պատասխան կամ չի ստացվում բացասական պատասխան:
- 19) Ընթացիկ առևտրի վերաբերյալ տեղեկատվությունը բացահայտվում է յուրաքանչյուր առևտրային նստաշրջանի ընթացքում իրական ժամանակի ռեժիմից առավելագույնը 30 րոպե (եթե Օպերատորի գործադիր մարմնի որոշմամբ ավելի կարճ ժամկետ սահմանված չէ) ուշացումով՝ մինչև տվյալ առևտրային նստաշրջանի ավարտը:
- 20) Օրական տեղեկատվությունը բացահայտվում է տվյալ առևտրային օրվա առևտրային (հետառևտրային) նստաշրջանների փակումից հետո 30 (երեսուն) րոպեի ընթացքում:
- 21) Ամսական, եռամսյակային և տարեկան պարբերականությամբ հանրությանը տեղեկատվության բացահայտումն իրականացվում է ոչ ուշ, քան տվյալ ժամանակահատվածի վերջին օրվան հաջորդող 5-րդ օրը:

Գլուխ 9. Տեղեկությունների գաղտնիության ապահովումը

- 1) Շուկայի մասնակիցների կողմից կնքված գործարքների կողմերի, առևտրային համակարգ հայտեր մուտքագրած առևտրի մասնակիցների, ինչպես նաև գործարքների կնքման համար նախատեսված ֆինանսական գործիքների վերաբերյալ տեղեկությունները համարվում են գաղտնի:
- 2) Սույն գլխի 1) կետում նշված տեղեկատվությանը ծանոթանալու իրավունք ունեն Օպերատորի միայն այն աշխատակիցները, որոնք իրենց աշխատանքային պարտականությունների կատարման բերումով անմիջականորեն մասնակցում են նման տեղեկատվության մշակմանը:
- 3) Օպերատորի այլ աշխատակիցները և պաշտոնատար անձինք, բացառությամբ օրենքով և Օպերատորի այլ կանոններով սահմանված դեպքերի, իրավունք ունեն ծանոթանալու միայն սույն կանոններով սահմանված՝ հրապարակման ենթակա տեղեկատվությանը:

Գլուխ 10. Կանոններում փոփոխությունները և լրացումները

- 1) Սույն կանոններում փոփոխություններն ու լրացումները դրա անբաժանելի մասն են և ուժի մեջ են մտնում օրենքով սահմանված կարգով, եթե այլ բան սահմանված չէ սույն կանոններով:

